ԳԵՐՄԱՆԱՑԻ ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Մեր օրերում, երբ Թուրքիայում իրագործված հայոց ցեղասպանության ճանաչման հարցը գնալով նոր հնչեղություն է ստանում՝ իր վրա բևեռելով միջազգային հանրության ուշադրությունը, մանավանդ կարևոր է դառնում գերմանական փաստաթղթերի հրապարակումը, այն կողմի փաստաթղթերի, որը Թուրքիայի դաշնակիցն էր ու բարեկամը Առաջին աշխարհամարտում և որի թողտվությամբ և համաձայնությամբ երիտթուրքական կառավարությունը իրականացրեց արևմտահայ ժողովրդի եղեռնը: Իրենց բարեկամ գերմանական գործիչների վկայության գեպքում թուրքական կողմը պարզապես լռում է:

Միաժամանակ մի բան ստույգ ակներև է. եթե Գերմանիայի կայզերական կառավարությունը կամենար, ապա Թուրքիայում ունեցած իր քաղաքական ազդեցությամբ և ռազմական հզոր ներկայությամբ լիովին կարող էր կանխել հայոց ցեղասպանությունը: Սակայն, ելնելով քաղաքական հաշիվներից, կայզերական կառավարությունը դա չկամեցավ, չուզեց «վիրավորել» իր Թուրք դաշնակցին: Ճիշտ այնպես, ինչպես Քլինտոնի պահանջով ամերիկյան կոնգրեսի օրակարգից հանվեց հայոց ցեղասպանության հարցի քննարկումը: Զարմանալու ոչինչ չկա. պատմությունը գաժանորեն կրկնվում է՝ ի վնաս ճշմարտության և հոգուտ ուժեղների:

Արդեն 1915 թ. մայիսի 31-ին Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը ստանում է Էնվերի առաջարկը՝ չխանգարել արևմտահայերի բռնադաղթեցմանն ուղղված Թուրքական գործողություններին: Այդ մասին նույն օրը դեսպանը №1263 թվակիր գրությամբ Գերմանիայի արտգործնախարարությանը իրազեկում էր, թե Էնվերը «համառորեն խնդրում է, որպեսզի մենք (գերմանացիները – Վ. Մ.) այդ գործում նրան չխանգարենք»: «Իհարկե,– գրում էր Վանգենհայմը,– այդ միջոցառումները հայ բնակչությանը բերում են դաժանություն: Բայց ես այն կարծիքին եմ, որ այդ միջոցառումները մենք, թերևս, ձևական առումով պետք է մեղմացնենք, բայց սկզբունքորեն չխանգարենք դրանց»: Մի փոքր ուշ գերմանական դեսպանությունը Թուրքիայում հավատարմագրված գերմանական բոլոր հյուպատոսներին իջեցրած շրջաբերական հրահանգով պարտավորեցնում է մնալ չեզոք և չխանգարել հայերի ողջակիզմանն ուղղված Թուրքական կառավարության գործողություններին:

Ստորև հրապարակվող փաստաթուղթը մենք քաղել ենք կայզերական Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվից, 1989 թ.: Թեև փաստաթղթերի վերջին մասը և հավանորեն այդ պատճառով նրա հեղինակի անունը չեն պահպանվել, սակայն պահպանվել է նորերս մահացած Վանգենհայմին վերագրված բարոն Ֆոն Նոյրատին հասցեագրված 1915 թ. օգոստոսի 10-ի կից գրությունը, որը դույզն իսկ կասկած չի թողնում փաստաթղթերի վավերական լինելու մասին: Ինչպես երևում է կնիքից, կից գրության հեղինակը «Անատոլիայի

օսմանյան երկաթուղի» ընկերության ("Chemin de Fer Ottoman d'Anatolien") ներկայացուցիչն է:

Հաղորդման բովանդակությունն ակնհայտորեն վկայում է, որ նրա հեղինակը Թուրքիայում գտնված գերմանական գործարար շրջանակների այն ներկայացուցիչներից մեկն էր, որը, ինչպես ինքն է գրում, ահա 20 տարի է (1895–1915 թթ.), ինչ գտնվում է Թուրքիայում և ականատես է հայկական երեք ցեղասպանության (1890-ական թվականներին, 1908 թ. Ադանայի ջարդերին և 1915 թ. Մեծ եղեռնին):

Եվս մի կարևոր հանգամանք. հեղինակը իր հաղորդումը կազմել է Թուրքիայում, հենց հայոց ողջակիզման օրերին և կազմել է սոսկ գերմանական պաշտոնական շրջաններին գաղտնի իրազեկելու նպատակով, իրողություններ, որոնք ավելի քան կարևորում են փաստաթղթերի նշանակությունը:

Սույն փաստաթղթերի հրապարակումը ունի որոշակի պատմաիրավաբանական իմաստ՝ այն, որ նրա հեղինակը Թուրքիայում ապրած, հայերին չհամակրող հայատյաց մի գերմանացի է, և, հետևաբար, նրան անհնարին է կասկածել հայերի օգտին Թուրքերի դեմ վկայելու մեջ: Ընդհակառակը, թուրքական պրոպագանդայի ազդեցությամբ կամ էլ իր իսկ հակահայկական տրամադրությանը ներդաշնակ՝ նա առանց որևէ հիմնավորման և փաստարկման տարածվում է հայ հանցագործների հասցեին, կրկնում Թուրքերի նկատմամբ «հայերի գործադրած բռնությունների» մասին Թուրքական առասպելը, որը Թուրքական պրոպագանդիստական մեքենան, Թուրքիային քաջատեղյակ ավստրիացի ճանաչված հրապարակախոս դոկտոր Ստեֆան Շտայնի վկայությամբ, տարածում էր աշխարհով մեկ, հայտարարելով, թե «հայերն աշխարհում ամենամեծ հանցագործներն են, իսկ Թուրքերը սոսկ հայկական բարբարոսության անմեղ զոհերը»:

Փաստաթղթի հեղինակը, այնուամենայնիվ, հայերի զանգվածային ոչնչացմանը և բռնագաղթեցմանը դեմ հանդիման՝ չի դիմացել և անհրաժեշտ է համարել դրանց մասին խիստ գաղտնի կերպով իրազեկել գերմանական իշխանություններին՝ տողերի արանքում զգուշացնելով Գերմանիայի համար դրանց անխորժ հետևանքները: Տվյալ դեպքում, այնուամենայնիվ, մենք գործ ունենք մի փաստաթղթի հետ, որտեղ օբյեկտիվորեն ներկայացված է 1915 թ. ամռանը Թուրքերի կողմից կատարված հայոց բռնագաղթեցման և ոչնչացման սահմռկեցուցիչ պատկերը, մի փաստաթուղթ, որին Թուրքական կողմը ոչինչ հակադրել, առավել ևս այն հերքել չի կարող:

Թուրքիայում իրագործված հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը ցանկացած գնով խափանելու համար այժմ Թուրքական շրջանակները, ամերիկյան որոշ «Թուրքասերների» հետ դաշն կնքած, առաջարկում են սկսել երկխոսություն հայ պատմաբանների հետ, այն բանի համար, որպեսզի ապացուցվի վաղուց ապացուցված իրողությունը՝ Թուրքիայում կատարված հայոց ցեղասպանության մասին:

Այդ ծուղակի նպատակը ավելի քան ակներև է, այն է՝ պետությունների քննարկման օրակարգից հանել Թուրքիայում հայոց ցեղասպանության ճանաչման հարցը և այն հանձնել պատմաբանների երկխոսությանը, այսինքն հնարավորություն տալ հայատյացներին և պատմության կեղծարարներին որքան հնարավոր է ձգձգել հարցը և այն վերածել անպտուղ և անիմաստ բանավեճի առարկայի: Ոչ մի հայ (և ոչ միայն հայ) պատմաբան, որը դեռևս չի կորցրել իր խիղճն ու

ողջամտությունը, չի կարող համաձայնվել այդ նենգ առաջարկի հետ, քանի որ ոչ միայն նրանց, այլև քաղաքակիրթ համայն աշխարհի համար Թուրքիայում իրագործված հայոց ցեղասպանության փաստը վաղուց ապացուցված ճշմարտություն է: Չէ՞ որ դեռևս 1919թ. այն ճանաչեց Թուրքական ռազմական գատարանը, որը հայոց ցեղասպանությունը կազմակերպած 8 Թուրք պարագլուխների դատապարտեց մահապատժի: Այնուհետև, ի՞նչ պետք է այդ երկխոսության ժամանակ ապացուցի հայկական կողմը, այն, որ ցեղասպանության հետևանքով դադարեց գոյություն ունենալ ամբողջ Արևմտահայաստանը՝ պատմական Հայաստանի 9/10 մասը, որ ոչնչացման ենթարկվեցին ավելի քան 1,5 մլն հայեր ... իրողություններ, որոնք ողջ աշխարհին քաջ հայտնի են և ապացուցման կարիք չեն զգում:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կոստանդնուպոլիս, 10 օգոստոսի 1915

Շատ հարգելի պարոն Ֆոն Նոյրատ.

Առընթեր Ձեզ եմ հղում ինձ հասած մի զեկույց՝ հետագայում ըստ պատկանելույն ուղարկելու համար:

Ողջույններով՝
Ձեզ նվիրված (ստորագրություն)

Կայսերական դեսպանության
պարոն խորհրդական բարոն ֆոն
Ն ո յ ր ա տ ի ն

Ա յ ս տ ե ղ

Politisches Archiv des
auswartigen Amtes kaiserlichen
Deutschlands, R 14105, Ab. 49683

Խիստ գաղտնի

Ես այնուամենայնիվ օգտվում եմ ինձ ներկայացած հարմար առիթից, վստահելի անձնավորության միջոցով Ձեզ հղելու խիստ գաղտնի տեղեկություններ: Լրարերը հավասարապես կարող է Ձեզ տալ գաղտնի տեղեկություններ, որոնք չպետք է հայտնի լինեն հանրությանը:

Խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում կատարվող մեծ հետապնդումներին: Նախքան մանրամաս-

նություններ հաղորդելը, ես ուզում եմ հայտնել, որ ես ոչ մի դեպքում ինձ համար շատ անհամակրելի այս ժողովրդի բարեկամը չեմ: Ես հաստատ գիտեմ, որ հայերը ռուսների կողմից գայթակղված, պատրաստ են եղել հանդես գալ Թուրքիայի դեմ: Ես տեղյակ եմ այն մասին, որ հայկական շատ տներում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ռումբեր, հրացաններ, փամփուշտներ: Ինձ հայտնի է, որ հայերը Սամսունում, Դյորտոլում Թշնամու նավերին ազդանշան են տվել, որ նրանք պետական դավաճանության մեղքեր են գործել: Ես լսել եմ, որ նրանք Վանում և Բիթլիսում Թուրքեր են սպանել, կարճ ասած ես գիտեմ, որ խիստ և արտակարգ միջոցառումները պահանջել են երկրի անվտանգության շահերը:

Ոչ ոք, իհարկե, չէր կարող հանդիմանել, եթե բազում մեղավորներ հրապարակավ մահապատժի ենթարկվեին: Ցավոք, դա եղել է միայն առանձին դեպքերում և ցավոք, առկա են համոզիչ ապացույցներ, որ Արևելքում (Օսմանյան կայսրության մեջ – Վ. Մ.), հակառակ գերմանական լրագրերում եղած բոլոր հերքումներին, հայերը սիստեմատիկորեն դլխովին ոչնչացվում են: Կարճ ասած գործ ունենք մի ժողովրդի ոչնչացման հետ այնպես, ինչպես այն այնպես հիմնովին հասցվեց հրեա ժողովրդին Հռոմի կողմից Բար Կոզբայի պատերազմում:

Որ գերմանական կառավարությունը սահմանամերձ և առափնյա շրջաններից վտանգավոր ժողովրդի հեռացմանը իր տված համաձայնությունը կարող է բացատրել, դա ինձ համար ակներև է, բայց նա չի կարող, ինչպես դա այսեղ Թուրք ժողովրդին են ներկայացնում, համաձայնվել հայերի ոչնչացման հետ և, ցավոք, որքան հաճախ էին ինձ դրանում համոզում ժողովրդի և զինվորականության միջից: Այո, անգամ պահանջում են ընդունել, թե այդ «աշխատանքը» որքան հիանալի է կատարվում:

Ես շրջել եմ Անդրոբա վիլայեթի արևելյան հատվածը, Կայսարիի մութասերիֆլիքը, Կիզիլ Իրմակից հյուսիս ընկած տարածքները, առաջներում Սիվաս վիլայեթի մի մասը: Վերջինում բոլոր գյուղերը ես գտա մի մասով լրիվ դատարկ, մյուս մասով տղամարդ բնակչությունից զրկված: Սեփական աչքերով տեսել եմ, թե ինչպես Թուրքերը դեղեցիկ կանանց առևանդում էին, հայ կանանց հետ դուրս էին գալիս թփուտներից, դռները գոցած տներից լսել եմ կանանց և երեխաների լացուկոծն ու աղիողորմ ճիչերը: Ես տեսել եմ, թե ինչպես լծկան անասունների և սայլերի վրայից կողոպտում էին այս մարդկանց տնային աղքատիկ իրերը: Կողոպտիչները իմ ներկայությունից փոքր-իսկ չէին քաշվում: Ընդհակառակն, Թուրքերը ինձ բարեկամաբար համոզում էին, որ դա Գերմանիայի հրամանն է, որ ես ևս այնքան հավ վերցնեմ, որքան կարիք կունենամ ճանապարհին:

Սարիղշլայից հյուսիս, Կիզիլ Իրմակի աջ ափին շատերի թվում ես հանդիպեցի նաև տարիներ առաջ ինձ ծանոթ մի զինվորի: Ինձ պատմեցին, որ մի քանի օր առաջ մի փոքրիկ կիրճում, հանքային տաք ջրերից ոչ հեռու գնդակահարել են մոտ 2000 հայ:

Երբ երեկոյան հասա Սարիղշլա, տեսա հայ կանանցով և երեխաներով բեռնված մոտ 300 եզասայլեր, նրանք իրենց հետ ոչինչ չէին տանում, բացի ցնցոտի ծածկոցներից, հաճախ կային նաև գրեթե այնպիսիները, որոնք չունեին ոչ տնային իրեր, ոչ էլ պարեն: Շատ ողբալի էր տեսնել այդ

սովյալներին ու թշվառներին: Ամբողջությամբ վերցրած կլիներ 12-15000 մարդ: Ակներևաբար, նրանց ուզում էին քշել դեպի Ուզունյայլայի անապատը, որպիսի անմխիթար երկիրը ձգվում է Եփրատի և Արգաուսից արևելք ընկած հրաբխային շրջանի միջև: Այստեղ չի կարող կերակրվել մարդկանց մեծ բազմություն: Ես այդ վայրը գիտեմ իմ նախկին ուղևորությունից ի վեր: Վերջապես զինվորները հրապարակորեն պատմում են, որ այս մարդկանց քշում են դեպի գերեզմաններ, և այդ թշվառների ճակատագիրը միայն մահն է. զրուցելուց հետո այդ առթիվ ոչ մի կասկած չմնաց:

Սիվաս քաղաքում այլևս ոչ մի հայ չես տեսնի, կանայք ու երեխաները, ծերերը քշվել են Ուզունյայլա: Սելջուկյան հին մեդրեսեները վերածվել են բանտերի, որոնք լեփ-լեցուն են հայերով: «Մենք նրանց բոլորին կսպանենք»,– ասաց ինձ ուղեկցող սպան: Սիվասում հայկական բոլոր խանութները փակել են և կնքել: Քաղաքը ունի 60-80000 բնակիչ և թերևս 30000 հայ բնակիչ, որոնց ձեռքում է գտնվում այս քաղաքի հիմնական առևտուրը. երկար ժամանակով այն ոչնչացված է:

Երբ ես կրկին վերադարձա Կայսարի, հանդիպեցի երկար քարավանի վրա նստած հայերի, որոնց Սամսունից շրջանցիկ ճանապարհով Սիլեի միջով քշում էին Սիվաս: Նրանց թվում կային հայ կաթոլիկ հոգևորականներ և միանձնուհիներ: Այդ առթիվ ես զարմացա եթե ուզում են ռուսական սահմանին մերձակա շրջանները մաքրել վտանգավոր տարրերից, չպետք է որ նրանց նորից Արևելք քշեն:

Սարիղչլայում կրկին հասել էին հայ կանանց ու երեխաների մեծ քարավաններ, որոնց պետք է քշեին Ուզունյայլա: Այնտեղ ես հանդիպեցի պարոն կոմս Շուլենբուրգի արշավախմբին, որին ես իմ դիտարկումները հայտնեցի: Ես այնուհետև տեղեկացա, որ Էրզինջանի շրջակայքում կանայք և երեխաներ զինվորների կողմից սարսափելի ձևով կոտորվել էին, որ կարմիր խաչի գթության քույրերը, որոնք արտահայտել էին իրենց բողոքը, Էրզնջանի մուտասարիֆի կողմից սպատիների ուղեկցությամբ կոպիտ ձևով հեռացվել էին երկրից անհետևանք թողնելով գերմանական սանիտարական կայանի ղեկավարի վճռական բողոքները:

20 տարի է ես այս երկրում եմ և մասնակցում եմ այժմ արդեն երրորդ հայկական հետապնդմանը: Ես կարող եմ նույնիսկ ասել, որ այս վերջինը ամենաարմատականն է, քանի որ գրեթե համոզվածություն կա, որ Էրզրումի, Սիվասի և սահմանամերձ նահանգների ամբողջ ազգաբնակչությունը սպանված է կամ էլ պետք է սպանվի:

Երբ ես գրեթե մեկամսյա բացակայությունից հետո կրկին Կայսարի հասա, հենց այդ ժամանակ տղամարդ բնակչությունը վտարվում էր և հատկանշական է նորից Արևելք, դեպի հայ ժողովրդի մեծ գերեզմանը: Կայսարին առևտրի համար չափազանց կարևորագույն մի վայր է: Այն ամբողջությամբ ընկած է հայերի ուսերին: Հայոց բոլոր խանութները ես գտա փակված, շուկան ավերված, ինդուստրիան, գործվածքեղենի արտադրությունը, գորգագործական ֆաբրիկաները ավերված: Այս ամենը կարող է միայն դառը հետևանքներ ունենալ:

«Արդյոք Դուք ունե՞ք այն բանի ապացույցները, ինչ որ ասում եք»,– հարցրեց ինձ կոմս ֆոն Շուլենբուրգը: Անհերքելի անուղղակի ապացույցը երկիրն ու մարդկանց իմ լավ իմանալն է, շատ ավելի լավ, քան գերմանական մամուլում Թուրքիայի «գիտակ հռչակված» գր. Յաքհր և ընկերները, որը Ագանայի կոտորածների մասին ճշմարտությանը հակասող մի հոդված է դրել, որը պնդում է, թե անատոլիական ռեգիֆների մի գունդը ավելի գերադասելի է, քան հետևակի առաջին գվարդիական գունդը: Մեր գվարդիայից վեր դասված այդ ռեդիֆը այժմ հերոսություններ է գործում և կոտորում է կանանց ու երեխաների:

Գերմանական մեր մամուլը համոզված կերպով հերքում է կոտորածները, այլափոխում դրանք:

Մենք, գերմանացիներս, մեր պատերազմը վարում ենք արժանավայել կերպով, մեր թշնամիները մեզ վարկաբեկում, զրպարտում են, կարող են ասել, քանի որ մենք միայն արյուն ենք թափել որտեղ մեղավորներ կային: Ով պետական դավաճան է, պետք է մահանա: Հայերի մեջ հազարավոր մեղավորներ կան, նրանց պետք է հրապարակավ դատել: Բայց սպանել կանանց ու երեխաների, ոչնչացնել մի ժողովուրդ, որը, եթե անդամ անհաճո է, բայց առհատրին անընդունակ թուրքերի համար մի անհրաժեշտություն է, դա, բացի անմարդկային լինելուց, չափազանց հիմարություն է, քանի որ տանում է դեպի պետության սնանկացում և երկիրը դարձնում անկենսունակ:

Քանի որ մենք ամենուրեք թշնամիներ ունենք, մենք պետք է զգուշանանք...